15759

355(47·925)
Z-24

1917.

355(47.925)
Z-24

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Հաստատուած Համառուսական հայ Զինուորական Համագումարում 20—25 նոյեմբ. 1917 թիւ.)

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
именна. Мясникиана
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ԱՇԽԱՏԱՒՈՐ» Գօրգիինսկի փող. № 38

2001

2010

355(47.925)
Z-24

370
1986-44
ա

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

(Հաստատուած Համառուսական հայ Զինուորական Համագումարում 20—25 նոյեմբ. 1917 թիւ.)

1004
159203

Հայրենիքն ու յեղափոխութիւնը վտանգի մէջ են։ Երկրի բոլոր կարող ու ստեղծագործող ուժերին կոչ է արուում միանալ, ամուր, կուռ ոյժ կազմել հայրենիքն ու յեղափոխութիւնը պաշտպանելու, փրկելու կործանումից ու պատերազմի աւերմունքից։ Ելակէտ ունենալով Ժամանակաւոր Կառավարութեան ու յեղափոխական դեմոկրատիայի ընդունած ու յայտարարած այս դրութիւնը, մենք մոմենտի պահանջ ենք համարում համայն հայ զինուորականութեան միանալը կազմակերպուած ուժով պաշտպանելու այրենիքն ու յեղափոխութիւնը, որի յաջողութիւնն անմիջապէս կապուած է զօրքի ռազմական ոգուց։

Յեղափոխութիւնն իրա դրօշակի վրայ բոլոր մանր ազգութիւններին բերում է ազատութիւն և հայ աշխատաւոր ժողովրդին իր ազգային ու դասակարգային խնդիրների լուծում։

Ուրիշ ճանապարհ մենք չգիտենք ու չենք փընտրում։

Մեր բաղձանքների իրականացումը գտնում ենք Ռուսական յեղափոխութեան պայմաններում, նրա

պաշտպանութեան ու բարեյաջող վերջաւորութեան, երկիրը հակայեղափոխութիւնից ու պատերազմի կործանումից ազատելու մէջ։ Մանաւորապէս Կովկասեան ճակատի անյաջողութիւնն ու ճեղքումն աննկարագրելի արհաւիրքներ է սպառնում առանձնապէս մեզ հայերիս։ Այս պատճառով կոչ է արւում բոլոր հայ զինուորականներին յեղափոխութեան ու երկրի առաջ կատարելու իրենց զինուորական ու քաղաքացիական պարտքը։

Հայ Զինուորական Միութեան նպատակն է՝ միացնել բոլոր ուժերը՝ պաշտպանելու յեղափոխութիւնն ու բարձրացնելու զօրքի ռազմական ոգին։

Ա. Միութեան նպատակն ու խնդիրները

1) Հայ Զինուորական Միութիւնն ու նրա բոլոր մարմինները նպատակ ունեն ղեկավարել հայ զինուորականութեան ազգային-կուլտուրական ու քաղաքական կեանքը։

2) Բոլոր քաղաքական և ընդհանուր զօրային հարցերում հայ զօրամասերի ղեկավարող մարմիններ են հանդիսանում գոյութիւն ունեցող կոմիտէները։

Բ. Զօրքի ուժի եւ ռազմական ոգու բարձրացումը

1. Կովկասեան բանակում բոլոր տեսակի հայկական զօրամասերի կազմակերպումը։

2. Կովկասեան բանակում գոյութիւն ունեցող հայ զօրամասերի ուժեղացումը։

3. Նպաստել զօրքը վերափոխելու նոր դեմոկրատական սկզբունքներով։

4. Սպաների և զինուորների մէջ հաստատել սերտ միութիւն։

5. Զօրքի մէջ հաստատել յեղափոխական դիսցիպլինա։

6. Կուռել մասնաւոր անհատների և կազմակերպութիւնների պրոպագանդայի դէմ, որոնք կազմալուծում են զօրքը և նուազեցնում նրա ռազմական ոգու ոյժը։

Գ. Կռիւ դասալքութեան դեմ։

Դ. Կուլտուրա-կրթական գործունեութեան եւ յեղափոխական-սոցիալիստական պրոպագանդան հայ զօրքի շարքերում։

1. Բացել զինուորների համար հայկական գրագիտական դպրոցներ։

2. Բացել հայկական ժողովրդական համալսարան։

3. Կազմակերպել դասախօսութիւններ, զրոյցներ և այլն։

4. Հրատարակել և տարածել լրագիրներ, գրքեր, գրքոյկներ և բացել գրադարան-ընթերցարաններ։

5. Զինուորական բորհրդի գործադիր մարմինը հրատարակում է և ղեկավարում Հայ Զինուորական Միութեան կենտրոնական օրգանը։ Միութեան խոշոր բաժանմունքները գործադիր մարմնի թոյլատրութեամբ կարող են ունենալ իրենց տեղական թերթը։

Ե. Կովկասեան ազգութիւնների հետ պահպանել եւ զարգացնել հարեւանական բարի յարաբերութիւն.

Զ. Հաւաքել եւ կարգաւորել այն բոլոր նիւթերն ու փաստաթղթերն, որոնք վերաբերում են հայութեան մասնակցութեան նորագոյն համաշխարհային պատերազմում։

1. Տեղեկութիւններ ռուսական զօրամասերում եղած հայերի թւի մասին։

2. Արձանագրել սպանուածներին, վիրաւորներին ու մեռածներին։

3. Արձանագրել հայ զօրամասերի և առանձին անհատների աչքի ընկնող քաջագործութիւնները և նրանց ստացած պարգևանշանները։

4, Հայ զօրամասերի նիստ ու կացի և սովորութեանց նկարագրութիւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Հայ Զինուորական Միութիւնը ազգային-կուլտուրական և հայ քաղաքական հարցերում ենթարկւում է Համազգային հայկական մարմին—ներկայումս՝ Հայ Ազգային Խորհրդին։

2. Հայ Զինուորական Միութեան բոլոր անդամները ենթարկւում են Միութեան իրաւասու մարմինների որոշումներին։

3. Հայ զօրամասերում գտնւող բոլոր անհատները պարտաւոր են անդամագրւել Հայ Զինուորական Միութեան։

ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Միութիւնը կազմւած է իսկական եւ օժանդակող անդամներից։

1. Միութեան իսկական անդամներ կարող են լինել զինուորական ծառայութեան մէջ գտնւող բոլոր հայերը՝ սպայ, բժիշկ, զինուոր, աստիճանաւոր և այն ծառայողները, որոնք աշխատում են զօրքի համար գործող հասարակական հիմնարկութիւններում։

2. Միութեան օժանդակող անդամներ կարող են լինել բոլոր ոչ զինուորական կոչում ունեցող անհատները, որոնց գործունէութիւնը կընդունւի օգտակար միութեան համար։

3.Առաջին կէտում յիշւած բոլոր անձերը ընդունւում են Միութեան անդամ—եթէ նոքա կ'տան համա-

պատասխան համաձայնութիւն։

4. Օժանդակող անդամներն ընդունւում են Միութեան խորհրդի գործադիր մարմնի կողմից։

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ա. Միութեան անդամների հանրագումար։

1. Միութեան բոլոր գործերի գլխաւոր ղեկավարութիւնը պատկանում է Համագումարին։ Նա է տալիս Զինուորական Միութեան խորհրդին դիրեկտիւներ և ընտրում խորհրդի անդամներ։

2. Համագումարը հրաւիրւում է պարբերաբար տարեկան մի անգամ նոյեմբեր ամսին։ Արտակարգ համագումարներ հրաւիրւում են Միութեան խորհրդի որոշմամբ բացառիկ դէպքում և հանգամանքներում։

3. Համառուսական համագումարի հրաւիրումը տեղի է ունենում Միութեան Գործադիր Մարմնի կողմից։

Բ. Միութեան խորհուրդ

1. Միութեան բոլոր գործերի ընդհանուր ղեկավարութիւնը պատկանում է խորհուրդին։ Նա է տալիս դիրեկտիւներ գործադիր մարմնին և ընտրում ինչպէս գործադիր մարմին, նոյնպէս և վերաստուգիչ յանձնաժողով։

2. Խորհրդի անդամներ են հաշւում.—

ա) բոլոր հետևակ և հեծելազօր զնդերի ներկայացուցիչները՝ իւրաքանչիւրից 2 հոգի.

բ) Հետևակ պահեստի զնդերի ներկայացուցիչները՝ իւրաքանչիւրից 2 հոգի.

գ) Նոյն զնդերի անջատ բատալիոնի, նոյնպէս և յիւս հայկական պահեստի անջատ զօրամասերի ներկայացուցիչները՝ իւրաքանչիւրից 1 հոգի.

ղ) Թղթանոթաձիգ դիւիզիաներից ներկայացուցիչները՝ իւրաքանչիւրից 2 հոգի.

ե) Հայկական սապէօրնի բատալիօնի ներկայացուցիչները 2 հոգի.

զ) Հայկական անջատ բատարէաների ներկայացուցիչները իւրաքանչիւրից 1 հոգի.

է) Հայկական միւս առանձնակի զօրամասերի ու հաստատութիւնների ներկայացուցիչները՝ իւրաքանչիւրից 1 հոգի.

ը) Հայ Զինուորական Միութեան ճիւղերի ներկայացուցիչները՝ իւրաքանչիւրից 1 հոգի.

թ) Համառուսական Համագումարի ընտրութեամբ, համագումարի անդամներից 10 հոգի.

ժ) Ազգային խորհրդի զինուորական յանձնաժողովի բոլոր անդամները.

ժա) Երկրային բարձր իշխանութեան մարմնի, երկրային զօրային խորհրդի բոլոր հայ անդամները և հայկական զօրամասերի կոմիսարը։

ժբ) Հայկական կորպուսների և դիւիզիաների հրամանատարները և նրանց հաւասար իշխանութիւն ունեցող անհատները։

Մանօր. Վերոյիշեալ անհատներին թոյլատրւում է իրանց վոխարէն ուղարկեն իրենց ներկայացուցիչը։

3. Միութեան խորհուրդը հրաւիրւում է գործադիր մարմնի կողմից իւրաքանչիւր երեք ամիսը մէկ անգամ, իսկ բացառիկ դէպքերում և հանգամանքներում ամեն ժամանակ։

Գ. Միութեան խորհրդի գործադիր մարմին.

1. Գործադիր մարմինը վարում է Միութեան բոլոր գործերը։ Նա է տալիս Միութեան բաժանմունքներին և իր ներկայացուցիչներին դիրեկտիւներ և ուղեցոյցներ կազմում նրանց գործունէութեան համար հարկաւոր դէպքում։

2. Գործադիր մարմինը ընտրւում է խորհուրդից 15 հոգու կազմով։

3. Ազգային խորհրդի ներկայացուցիչը վճռական ձայնի իրաւունքով մտնում է գործադիր մարմնի կազմի մէջ։

4. Գործադիր մարմնին իրաւունք է տրւում իր կազմի մէջ ընդունելու կոօպտացիայի իրաւունքով մինչև 5 հոգի։

5. Գործադիր մարմնի անդամները կարող են վերընտրւել Միութեան խորհրդի կողմից՝ վերջինիս հայեցողութեամբ։

6. Գործադիր մարմնի անդամները ոռճիկ են ստանում խորհրդի որոշման համեմատ։

7. Գործադիր մարմնի վարչութիւնը բաղկացած է.—նախագահից, օգնական-նախագահից, քարտուղարից և գանձապահից։

8. Գործադիր մարմինը ընտրում է մասնաժողովներ, որոնց նախագահները կարող են լինել միայն մարմնի անդամները։ Մասնաժողովներին տրւում է իրաւունք կոօպտացիայի որոշ անձանց՝ գործադիր մարմնի որոշած քանակով։

9. Գործադիր մարմնին վերապահւում է իրաւունք զօրամասերի իշխանութեան տալ ցուցմունքներ զանազան պաշտօնների թեկնածուների վերաբերեալ։

Մանօր.-Զօրամասերի իշխանութիւնը նման ցուցմունքներ չստանալու դէպքում, ազատ է գործելու ըստ իր հայեցողութեան—ընդհանուր հիմունքներով։

10. Գործադիր մարմնին վերապահւում է իրա-

տունք զօրամասերի և համապատասխան հաստատութիւնների պաշտօնեաներին ժամանակաւորապէս հեռացնել մինչև խորհրդի որոշումն։

11. Գործադիր մարմնի անդամներն ազատ են ըստ պաշտօնի և ծառայութեան պարտականութիւններ կատարելուց. նոյն արտօնութիւնն են վայելում և խորհրդի 10 անդամները՝ ընտրած համառուսական համագումարից։

Դ. Միութեան բաժանմունքներ

1. Միութեան բաժանմունքները գործում են համաձայն գործադիր մարմնի ցուցմունքների և որոշումների։

2. Միութեան բաժանմունքները բացւում են այն դէպքում, երբ բաժանմունք բացելու վայրում կան 300-ից ոչ պակաս անդամներ։ 300 անդամից պակաս եղած դէպքում Միութեան բաժանմունք բացւում կամ փակւում է գործադիր մարմնի որոշման համաձայն։

Նաեւ.—Արդէն բացւած բաժանմունքները համարւում են գործադիր մարմնի կողմից վաւերացրւած։

3. Բոլոր բաժանմունքները ամսէ-ամիս յայտնում են գործադիր մարմնին իրենց գործունէութեան և հաշուետուութեան մասին։

ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Միութեան միջոցները կազմում են.—

ա. Աղգային Խորհրդից ստացւած գումարները։

բ. Տարեկան անդամավճարները — զինուորներից ըստ իրենց հայեցողութեան, իսկ միւսներից ոչ պակաս քան 10 ռուբլի։ Օժանդակ անդամները վճարում են ըստ իրենց ցանկութեան։

գ. Կամաւոր վճարները և նէբրներն, որոնք ընդունում են ինչպէս գործադիր մարմնի նոյնպէս և բաժանմունքների կոմիտէների կողմից։

դ. Դասախօսութիւններից, ներկայացումներից և այլ ստացւած հասոյթները։

2. Գործադիր մարմնին թոյլատրւում է հանգանակութեան դիմել բացառիկ դէպքերում, իսկ ճիւղերին՝ գործադիր մարմնի թոյլտուութեամբ։

3. Միութեան բաժանմունքները գործադիր մարմնին են յանձնում իրենց ունեցած մուտքի գումարներից ոչ պակաս քան 25%։

4. Ճիւղերի փակման դէպքում, ճիւղերի բոլոր ունեցածը յանձնւում է գործադիր մարմնին։

5. Խորհրդի գործադիր մարմինը, նոյնպէս և ճիւղերի կոմիտէները դրամական գործավարութեան համար պէտք է ունենան համարակրւած ժապաւենեալ մատեաններ։

6. Ճիւղերի գումարների ստուգումը վերապահւած է գործադիր մարմնին։

7. Գործադիր մարմնի դրամական հաշիւների ստուգումը յանձնարարւում է միութեան խորհրդից ընտրւած յանձնաժողովին։

8. Գործադիր մարմնի և ճիւղերի կոմիտէները ունին համապատասխան կնիք իրենց անունով հայերէն և ռուսերէն։

ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

Հայ Զինուորական Միութիւնը կարող է փակւել Միութեան համառուսական համագումարի որոշմամբ։

Փակման դէպքում Միութեան բոլոր միջոցները յանձնւում է Հայ Զինուորական Միութեան գործադիր մարմնին։

Հ.Զ.Մ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՅԻ ԱՆՎԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая

2013